# Մրցեցին ընտանեկան թիմերը

Ինչպես արդեն հաղորդվել է մեր թերթում, Չալթրի թիվ 3 միջնակարգ դպրոցի սպորտային դահլիճում անցկացվեցին Դոնի 2014 Սպարտակիադայի շրջանային փուլի մրցումները ընտանեկան թիմերի միջև: Մասնակցեցին Չալթրի, Կալինինի, Վեսյոլիի և Կարմիր Դրիմի ներկայացուցիչները: Յուրաքանչյուր թիմի կազմում ելույթ ունեցան երեք հոգի՝ հայրը, մայրը, երեխան: Ընդունված ծրագրով նախատեսված էին սեղանի թենիսի, շաշկիի, դարտսի և թեթև ատլետիկայի էստաֆետայի գծով մրցումներ:



Տղա երեխայով ընտանիքների մրցումներին մասնակցեցին Չալթրից՝ Արշակ Տատյանա և Վլադիմիր Խաթլամաջյանները, Կալինինից՝ Հակոբ Ելենա և Արամ Գրիգորյան-Պողոսյանները: Համոզիչ հաղթանակ տարան կալինինցիները:

Աղջիկ երեխայով ընտանիքների մրցումներին մասնակցեցին Չալթրից՝ Անդրեյ, Աննա և Լյուդմիլա Խարախաշյանները, Կալինինից՝ Ալեքսանդր, Լյուդմիլա և Միլանա Պոլովինկինները, Կարմիր Դրիմից՝ Արամ, Վեռա և Վիկտորիա Կուլբիկյանները, Վեսյոլիից՝ Վադիմ, Օլգա և Վերոնիկա Տռուսովները:

Լարված մրցումների արդյունքում առաջին տեղը գրավեց Կուլբիկյանների ընտանիքը: Երկրորդ տեղում եղան Պոլովինկինները, երրորդում՝ Խարախաշյանները:

Առաջին տեղերը գրաված երկու ընտանիքները մայիս ամսին Ուստ-Դոնեցկի շրջանում կմասնակցեն Դոնի Սպարտակիադայի վոնալ մրցումներին:

*Նկարում՝ մրցումներին մասնակցած ընտանիքները իրենց երկրպագուների հետ:*

*Լուսանկար՝ Ա ՄԻՐՈՒՔՅԱՆԻ*

# Անցկացվեց "Քո հնարավորությունները - 2014" ինտելեկտուալ-անձնական մարաթոնի շրջանային փուլը



Օրերս Չալթրի թիվ 1 միջնակարգ դպրոցում անցկացվեց "Քո հնարավորությունները - 2014" ինտելեկտուալ-անձնական համառուսաստանյան մարաթոնի շրջանային փուլը:

Մյասնիկյանի շրջանի դպրոցները այդ միջոցառմանը մասնակցում են արդեն երրորդ անգամ: Մարաթոնը իր յուրաքանչյուր մասնակցին ինքնաարտահայտվելու, բավականություն ստանալու հնարավորություն է տալիս, օգնում է համոզվել այն բանում, որ դպրոցում սովորելը կարող է ուրախություն բերել, լինել հետաքրքիր և որ ամենակարևորն է՝ օգտակար ու կյանքում անհրաժեշտ:

Մարաթոնի հիմնական նպատակը այն է, որ հայտնաբերվեն ու աջակցություն ստանան այն աշակերտներն ու նրանց ուսուցիչները, ովքեր կարող են իրենց դրսևորել որպես ֆունկցիոնալ գրագետ ստեղծագործական անձնավորություն, կարող են լուծել ոչստանդարտ կենսական կամ ուսումնական խնդիրներ, համագործակցել ընդհանուր հարցերում:

Այս տարվա մարաթոնը նվիրված է օլիմպիական շարժմանը: Առաջադրվում են անհատական հանձնարարություններ ինչպես ամեն մի մասնակից դպրոցականին, այնպես էլ ընդհանուր նախագծեր՝ թիմերին:

Այս անգամ մարաթոնին մասնակցեցին Մյասնիկյանի շրջանի չորս դպրոցներ՝ Չալթրի թիվ 1, թիվ 3, թիվ 11 միջնակարգ դպրոցները և Թոփթիի միջնակարգ դպրոցը:

Ընդհանուր առմամբ առաջին փուլում հանդես եկան 327 դպրոցականներ, երկրորդում՝ 72 (երրորդ-վեցերորդ դասարանների 12 հավաքական թիմեր), երրորդում՝ տարբեր հասակի 23 աշակերտներ (չորս դպրոցների թիմերը):

Որպես "Ֆունկցիոնալ ամենագրագետ թիմ" ճանաչվեց Չալթրի թիվ 1 դպրոցի թիմը, որպես "Ամենաթիմային թիմ"՝ Չալթրի թիվ 3 դպրոցի թիմը, որպես "Ստեղծագործական կոլեկտիվ"՝ Թոփթիի դպրոցի թիմը, որպես "Անհատականությունների միասնություն"՝ Չալթրի թիվ 11 դպրոցի թիմը:

*Նկարում՝ մարաթոնի շրջանային փուլի մասնակից չորս դպրոցների թիմերը լրիվ կազմով:*

## ՍԻՐԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ, շարունակվում է "Ջարյա" թերթի բաժանորդագրությունը 2014 թվականի 2-րդ կիսամյակի համար:

**Մինչև ապրիլի 10-ը հին գնով (222 ռուբլի) բաժանորդագրվել դուք կարող եք փոստատարների մոտ, գյուղերի կապի բաժանմունքներում կամ թերթի խմբագրությունում: Ապրիլի 11-ից բաժանորդագրության գինը կկազմի 348 ռուբլի 42 կոպեկ:**